այսօր եւս որ հանդիպին միմեանց, նա՛ միւսն կարծէ թէ զնոյն խօսս կամի ասել եւ զսիրտն խոցոտել, ի ձեռս տալն զձեռն՝ անդէն հանէ զսուրն եւ ի փորն տայ սատակեցուցանելով զնա ի սահմանս Մէրճանին, եւ ամբոխ կուտեալ ի վերայ նորա՝ ըմբռնեն զհարկանողն եւ տանին ի վէզիրն, եւ նա հրամայէ զնա ի նոյն ժամուն հատանել զգլուխ նորին ի մէջ շուկային մեծի, որ ասի Տիքիլի տաշ։

Կիրակի (5 Յունիս) Վարդավառ։ Օրս մի տաճիկ զնայ ի խանն Փայզանի որ ի կողմն Ղատրղա լիմանի, անդ մտանէ և խմէ գինի, զոր ծախողն կին լինի, և ի խմելն՝ գինեվաճառ կնոջն ձեռք արկանէ մի և Բ, և գան ի վերայ այլք եւ ասեն թէ Գինա՛ ել ի դուրս, բաւ է այդքան լրբութիւնդ. եւ ոչ անսայ, այլ եւս բորբոքի. ապա գայ եւ հոռոմ մի ծանօթ կնոջն այնմ, որ եւ խանութն եւս մօտ տանն այնորիկ, եւ նա նախատէ եւ ի բաց հանէ։ Եւ նա երթեալ շրջեալ ի սահմանս խանին եւ չոքեալ կրկին մտանէ անդ եւ ելանէ ի սանդուխսն երթալ ի վեր, եւ հոռոմն գայ ի դէմ թէ Մի՛ ելցես. եւ նա խստագոյն ընդդիմանայ, մինչեւ հոռոմին զնա ըմբռնեալ, որպէս զի ի վայր արկանիցէ, և նա հանեալ զդանակն իւր՝ անդէն հարկանէ ի փորն, մինչև թափել աղեացն։ Եւ աղաղակաւ ի դուրս վազէ ունելով զնա ի ձեռին՝ դէմ առ զուլլուխն, և զգնալն Զ է քայլին՝ անդէն զհոգին հանէ։ Եւ ամբոխք կուտին յանցաւորաց ռահիցն, եւ եւս արք խանին ըմբռնեալ զտաճիկն մինչեւ հասուցեալ ի զուլլուխն. եւ նոքա կալան զնա եւ պնդեցին ի կոճեղս, եւ ծանօթք նորա տարան ի զայմախանն. եւ ասէ նա թէ Մի տաճիկ զկեաւուր մի սպանցէ զի՞նչ լինիցի. եւ աղաղակեն արտաքուստ արքն որ դատախազ երևին։ Զնոսա ուղարկէ թէ Գնացէ՛ք ի մուհտին. եւ նոքա երթան ի մուհտին. եւ նա ասէ թէ Վասն է՞ր հոռոմն